ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՐԹԱԿՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՌԵԶԻԴԵՆՏ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌՑԱՆՑ (ՕՆԼԱՅՆ) ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-19/37»

ք. Երևան

«27» 09 2019թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Այուններթվորքս» ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Վահրամ Մերանգուլյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Էլեկտրոնային գնումների հարթակում Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների համար հայտերի ներկայացման առցանց (օնլայն) համակարգի մշակման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ կատարողը պատվիրատուին սկառավակի վրա, 3 օրինակից տրամադրում է մշակված համակարգի հիմնական կոդը (source code):

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **5938121 (հինգ միլիոն ինը հարյուր երեսունութ հազար հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**[21] **:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

---

[21] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[24] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

---

[24] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» << օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011017077
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար
_____ Ս. Հակոբյանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Այյունեթվորքս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 38/1, շին.55
«Ինեկոբանկ» ՓԲԸ Կորյուն մասնաճյուղ
Հ/Հ 2050422215691001
ՀՎՀՀ 02588485

Տնօրեն՝
_____ Վ. Մերանգուլյան
/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«25» 09 2019 թ. կնքված
ՀՀ ՖՆ-ԳՀՇՁԲ-19/37 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	48491100/501	Էլեկտրոնային գնումների հարթակում Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների համար հայտերի ներկայացման առցանց (օնլայն) համակարգի մշակման ծառայություն *	դրամ	5938121	1	Ք. Երևան, Մելիք Ադամյան 1	Ծառայության մատուցումը, այդ թվում թեսթավորումը և ինտեգրումը իրականացվում է պայմանագիրը կնքվելու օրվանից հաշված մինչև 30 օրացուցային օրվա ընթացքում: Նոր մշակված համակարգի սպասարկման համար սահմանվում է երաշխիքային սպասարկման ժամկետ՝ մինչև նոր ստեղծված համակարգի շահագործումը սկսվելու տարվան հաջորդող տարվա

							դեկտեմբերի 31-ը ներառյալ:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011017077
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար
---------- Ա. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Այյունեթվորքս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 38/1, շին.55
«Ինեկոբանկ» ՓԲԸ Կորյուն մասնաճյուղ
Հ/Հ 2050422215691001
ՀՎՀՀ 02588485
Տնօրեն
---------- Վ. Մերանգուլյան
/ստորագրություն/
Կ.Տ

Էլեկտրոնային գնումների հարթակում Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների համար հայտերի ներկայացման առցանց (օնլայն) համակարգի մշակման ծառայություն

Ներածություն

Սույն փաստաթուղթը նկարագրում է Էլեկտրոնային գնումների հարթակում Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների համար հայտերի ներկայացման առցանց (օնլայն) համակարգի (այսուհետև՝ համակարգ) մշակման տեխնիկական առաջադրանքը: Համակարգի մշակումը ներառում է դրա ստեղծումը, թեսթավորումը, ինտեգրումը և երաշխիքային սպասարկումը:

Առկա գործընթացի շահառու կողմերը

Էլեկտրոնային գնումների համակարգում շահառու կողմերն են՝

- Պատվիրատուն՝ գնումների մասին << օրենսդրության համաձայն գնումները էլեկտրոնային եղանակով իրականացնող պատվիրատուներ:
- Մասնակիցը՝ պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով գնման ընթացակարգերին մասնակցող անձիք:

Գնման ընթացակարգի հրավեր առկա համակարգում

Էլեկտրոնային գնումների համակարգում հրավերը կամ գնման ընթացակարգը, գնման պահանջի՝ առարկայի, պայմանների ու պահանջվող փաստաթղթերի ամբողջությունն է:

Հրավերը կառավարվում է հատկացված «աշխատանքային տարածքով», որի շրջանակում պատվիրատուն սահմանում է մրցույթի մանրամասները, պայմաններն ու կառուցվածքը:

Մրցույթի կամ էլեկտրոնային աճուրդի կառուցվածք

Աշխատանքային տարածքում սահմանվող, պարտադիր «մրցույթի կառուցվածք» կամ «աճուրդի կառուցվածք» , որը բաղկացած է հետևյալ բաժիններից («ծրարներից»).

«Մրցույթի կառուցվածք»՝

1. Պիտանելիության ծրար
2. Տեխնիկական ծրար

3. Ֆինանսական ծրար

«Աճուրդի կառուցվածք»՝

1. Դիմում - հայտարարություն տալու փուլ
2. Ընտրված մասնակցի և պատվիրատուի կողմից պայմանագրի նախագծի ստորագրում

Հայտ

Համակարգերում հայտը մասնակցի արձագանքն է մրցույթի կամ աճուրդի հրավերին՝ վերջինիս կողմից սահմանված կառուցվածքի ու պահանջների համաձայն (համապատասխանությունը, ամբողջականությունը, ինչպես նաև վիրուսների բացակայությունը ստուգվում և վավերացվում է համակարգի կողմից):

Հայտերի բացում

Հայտերի բացումն իրագործվում է սահմանված կարգով՝ մրցույթի դեպքում երկու գործածողի համաձայնությամբ, ըստ ARMEPS-ի կողմից առնչվող ՄՀ-ի համար գեներացվող առաջադրանքի, իսկ աճուրդի դեպքում՝ ավտոմատ եղանակով՝ ժամանակը լրանալուն պես:

Հայտերի գնահատում

Հայտերի գնահատումն իրագործվում է ըստ էլեկտրոնային մրցույթների և էլեկտրոնային աճուրդների համար սահմանված՝ գեներացվող առաջադրանքների:

Նպատակը

Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներին հնարավորություն ընձեռել հայտում ներառվող փաստաթղթեր ստորագրել էլեկտրոնային ստորագրությամբ՝ համաձայն Ռուսաստանի Դաշնության Անվտանգության դաշնային ծառայության 2011 թվականի դեկտեմբերի 27-ի «Որակավորված սերտիֆիկատի հիմնական էլեկտրոնային

ստորագրության որակյալ հավաստագրերի ձևի պահանջները հաստատելու մասին» N 795 հրամանի:

Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների էլեկտրոնային ստորագրությունների վավերականության չափանիշները կամ անհրաժեշտ պայմանները հետևյալն են՝

1. Հավաստագրման վավերության հաստատումը
2. Արմատային սերտիֆիկատի վստահության շղթայի ստուգումը

Մշակվող համակարգի համառոտ նկարագրությունը

Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների կողմից հայտում ներառվող փաստաթղթերի էլեկտրոնային ստորագրությունն իրականացվելու է տվյալ մասնակցի անմիջական մասնակցությամբ:

Էլեկտրոնային մրցույթների և էլեկտրոնային աճուրդների համակարգերում (այսուհետև՝ նաև համակարգեր) Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների համար ավելանալու է էլեկտրոնային եղանակով ստորագրության հնարավորություն: Ընդ որում նշված համակարգերի գլխավոր էջում լինելու է հղում՝ նախատեսված միայն Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների համար: Հղմանը հետևելուց հետո բացվելու է նոր էջ, որտեղ հնարավոր կլինի իրականացնել հետևյալ գործողությունները՝

- Օգտվողը ընտրում է փաստաթղթերը և դրանք վերբեռնում համակարգ:
- Օգտվողը սեղմում է ստորագրել հրահանգը:
- Համակարգը ստորագրում է դրանում վերբեռնված փաստաթուղթը էլեկտրոնային եղանակով:
- Օգտվողը ներբեռնում է փաստաթուղթը համակարգիչ:
- Օգտվողը կազմում է հայտի փաթեթը:
- Հայտը բացվելուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները՝

  ա) Պատվիրատուն ընտրում է ստորագրված փաստաթուղթը և հետևելով համակարգերում առկա հղմանը, այն վերբեռնում համակարգ.

բ) համակարգերը կատարում են համապատասխան ստուգումներ ստորագրության վերաբերյալ՝ վավերականություն, պիտանելիություն/հավաստիություն և ստորագրողի տվյալների հետ համապատասխանեցում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011017077
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար
_____ Վ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
Այյունեթվորքս» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 38/1, շին.55
«Ինեկոբանկ» ՓԲԸ Կորյուն մասնաճյուղ
Հ/Հ 2050422215691001
ՀՎՀՀ 02588485
Տնօրեն՝
_____ Վ. Մերանգուլյան
/ստորագրություն/
Կ.Տ